

Վարչական ղեկավար՝ Պողոսյան Աշոտ

Հեռ՝ 374 094-69-66-26

aregnadem.shirak@mta.gov.am

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 24կմ, ՀՀ պետական սահմանից՝ 11կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1890մ, բնակլիմայական պայմանները լեռնային, բնակչության թիվը՝ 488 մարդ, 101 ընտանիք, Համայնքի զբաղեցրած տարածքը՝ 1790հա որից՝ արոտներ 881հա, վարելահողեր - 623.32հա

1. Պատմական տեղեկություններ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի նախկին տարածաշրջանի Արեգնադեմ գյուղը որպես հայաբնակ գյուղ հիմնադրվել է 1988 թ-ին Վրաստանի հանրապետությունից և Ադրբեջանից գաղթած, ինչպես նաև Գյումրիից և մոտակա համայնքներից ներգաղթած բնակիչներով :

Նախկին անվանումը եղել է <Ագիգբեկով> , որն անվանվել է 26 կոմիսարներից մեկի պատվին:

Մինչ 1988 թ.-ը գյուղը բնակեցված է եղել ագերիներով, չի եղել ոչ մի հայկական ընտանիք:

Արեգնադեմը որպես հայկական գյուղ կարելի է համարել երիտասարդ:

Գյուղում բնակվողները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ,

սովետական տարիներին գյուղն ունեցել է կոլտնտեսություն:

Քանի որ հայաբնակ չի եղել չունի պատմամշակութային կառույցներ: Ներկայումս բնակվում է 491 մարդ, 110 ընտանիք: Գյուղի բնակչության զբաղվածությունը այժմ էլ հիմնականում հողագործությունն ու անասնապահությունն է : 1991թ.

գյուղում իրականացվել է սեփականաշնորհման ընդհանուր գործընթացը, 90

բնակիչ ունեն սեփականություն համարվող վարելահողեր և տնամերձ:

2. Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Շիրակի մարզի Արեգնադեմ գյուղը գտնվում է մարզի հյուսիս - արևմտյան մասում՝ սարի լանջին:

Գյուղի հեռավորությունը Երևանից – 141կմ , Գյումրիից – 24կմ, Ամասիայից – 3կմ է :

Ռելիեֆը խայտաբղետ է, տեղումները շատ:

Հանրապետության ամենացուրտ և ամենաձյունառատ վայրերից մեկն է:

Գյուղի մթնոլորտային տեղումների տարեկան միջին գումարը կազմում է 450-500մմ.:

Ձյունածածկ օրերի թիվը կազմում է 150- ի: Օդի ջերմաստիճանը տատանվում է - 40-ից +

30 աստիճանի: Խիստ կարճատև է գարունը և ամառը,

սառնամանիք ժամանակաշրջանը ամենաերկարն է՝ 5 ամիս:

Մթնոլորտային ճնշումը տատանվում է 550-600մմ սնդիկի սյան սահմաններում:

Արեգնադեմ համայնքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1890մ. բարձրության վրա:

Մշակվող հողերը գտնվում են միջին և ուժեղ թեքությունների վրա,

ինչպես նաև ալիքավոր հարթություններում:

3. Ժողովրդագրություն

2013թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Արեգնադեմ գյուղում բնակվում են 110 /ճուխ/ ընտանիք,
բնակչությունը 488 մարդ է:
Ժողովրդագրության պատկերը հետևյալն է՝

Տղամարդ - 262 Կին - 229

ՀՀ Շիրակի, գ. Արեգնադեմ

Ինդեքս՝ 2703